

1.3. *Գներ և սակագներ*

Գների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների
(նախորդ ամսվա նկատմամբ, %)

	Սպառողական գների ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾	Գների ինդեքսը շինարարությունում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս ⁶⁾
2006թ.						
Հունվար	102.5	97.8	100.3	99.1	99.1	101.4
Փետրվար	100.2	99.2	100.1	100.0	101.5	101.6
Մարտ	100.1	97.2	102.2	100.5	100.2	101.6
Ապրիլ	100.3	103.3	101.6	120.3	103.3	98.9
Մայիս	102.4	107.1	100.1	99.9	98.0	101.1
Հունիս	98.8	97.7	100.0	99.7	83.2	100.9
Հուլիս	99.3	100.0	100.1	100.0	83.9	103.5
Օգոստոս	99.1	99.7	100.5	100.1	83.2	104.3
Օգոստոսը 2005թ. դեկտեմբերի նկատմամբ	102.7	101.5	105.0	119.5	100.4*	110.2*
2006թ. հունվար-օգոստոսը 2005թ. հունվար-օգոստոսի նկատմամբ	101.5	100.3	107.3	112.8	115.0	107.8

*) 2006թ. օգոստոսի և 2005թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության մարզերում, 470 անվանում ապրանք-ծառայությունների գծով:

²⁾ Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք-ներկայացուցիչների գծով: Գների ինդեքսի հաշվարկը կատարվում է ժողտնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչի (ժՏԵԳԴ) համաձայն: Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին (ՏԳՏԴ) համապատասխան գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը նշակման փուլում է:

³⁾ Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:


⁴⁾ Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնափոխադրումների դիտարկված սակագների հիման վրա:

⁵⁾ Ըստ 7600 գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

⁶⁾ Ըստ 7600 գյուղացիական տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:


Գների, սակագների աճի տեմպերը 2005-2006թթ. հունվար-օգոստոսին

(նախորդ տարվա հունվար-օգոստոսի նկատմամբ, %)



Արտարժութային շուկա: 2006թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետության ինչպես սպառողական, այնպես էլ արժութային շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի, համապատասխանաբար 0.9% և 3.7% նվազում: 2006թ. օգոստոսին 2005թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է սպառողական գների 2.7% հավելաճ, իսկ հաշվարկային փոխարժեքը նշված ժամանակահատվածում նվազել է 10.6% (դրամն արժևորվել է): 2005թ. նույն ժամանակահատվածում արձանագրվել է սպառողական գների և հաշվարկային փոխարժեքի համապատասխանաբար 4.5% և 5.2% նվազում: 2006թ. օգոստոսին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 401.87 դրամ, ինչը ցածր է 2005թ. օգոստոսի համապատասխան ցուցանիշից 12.8%-ով (460.99 դրամ):


ՀՀ սպառողական գների ինդեքսի և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 2005-2006թթ. հունվար-օգոստոսին
(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



Սպառողական գներ: 2006թ. օգոստոսին հուլիսի համեմատ ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է 0.9% գնանկում, ինչը մեծապես պայմանավորվել է պարենային որոշ ապրանքատեսակների գների սեզոնային փոփոխություններով:

2006թ. հունվար-օգոստոսին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.3%՝ 2005թ. նույն ցուցանիշի 0.5% նվազման դիմաց:

Սպառողական գների հավելաճը 1997-2006թթ. օգոստոսին
(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)




Սպառողական գների փոփոխությունները 2006թ. օգոստոսին

(%)

	2006թ.				
	օգոստոսը				հունվար-օգոստոսը 2005թ. հունվար- օգոստոսի նկատմամբ
	2006թ. հուլիսի նկատմամբ	2005թ. դեկտեմբերի նկատմամբ	2005թ. օգոստոսի նկատմամբ	2005թ. նկատ- մամբ	
Սպառողական գների ինդեքս	99.1	102.7	107.2	102.8	101.5
<i>այդ թվում՝</i>					
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	98.2	102.0	108.0	101.3	101.3
ոչ պարենային ապրանքների	100.4	102.7	105.3	104.6	103.5
ծառայությունների	99.8	103.8	104.5	104.4	103.5

ՀՀ սպառողական շուկայում պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2006թ. հունվար-օգոստոսին (նախորդ ամսվա նկատմամբ, %)



Պարենային ապրանքների գներ. 2006թ. օգոստոսին 2005թ. դեկտեմբերի համեմատ պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 2.2%, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ՝ 8.9% գնաճ: Դրան զուգընթաց, 2006թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է պարենային ապրանքների 2.0% գնանկում, ինչը 0.5 տոկոսային կետով ցածր է 2005թ. նույն ժամանակաշրջանի գնանկման ցուցանիշից (2.5%):

Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(%)


	2006թ.				
	օգոստոսը				հունվար- օգոստոսը 2005թ. հուն- վար-օգոստոսի նկատմամբ
	2006թ. հուլիսի նկատ- մամբ	2005թ. դեկտեմբերի նկատմամբ	2005թ. օգոստոսի նկատ- մամբ	2005թ. նկատ- մամբ	
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	98.2	102.0	108.0	101.3	101.3
Պարենային ապրանքներ	98.0	102.2	108.9	101.4	101.5
հացամթերք	99.9	100.1	99.7	98.3	97.5
մսամթերք	99.6	102.6	104.7	104.8	104.5
ձկնամթերք	83.9	96.8	130.8	89.6	102.6
կաթնամթերք	99.6	100.0	102.8	101.2	101.7
ձու	102.9	88.8	114.4	95.2	94.7
կենդանական և բուսական յուղ	99.5	99.2	100.8	98.6	99.6
միրգ	86.9	107.9	125.2	95.5	89.8
բանջարեղեն և կարտոֆիլ	91.4	108.4	149.2	103.5	119.1
չաքարավազ	98.6	130.7	135.2	131.3	123.9

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	2006թ.				
	օգոստոսը				հունվար-օգոստոսը 2005թ. հունվար-օգոստոսի նկատմամբ
	2006թ. հուլիսի նկատմամբ	2005թ. դեկտեմբերի նկատմամբ	2005թ. օգոստոսի նկատմամբ	2005թ. նկատմամբ	
սուրճ, թեյ, կակաո	99.9	101.4	102.9	104.0	103.2
հրուշակեղեն	100.0	100.5	100.7	100.6	100.6
այլ նթերք	100.2	101.2	114.5	112.0	114.7
ոչ ոգելից խմիչք	99.8	101.2	101.6	101.7	102.6
Ոգելից խմիչք և ծխախոտ	100.0	100.2	100.4	100.4	100.4

Հացամթերքի, այդ թվում հացի և ալյուրի գների փոփոխությունները 2003-2006թթ.


(2002թ. նկատմամբ, %)



2006թ. օգոստոսին 2005թ. օգոստոսի համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի գներն աճել են 49.2%: Նշված ժամանակահատվածում արձանագրվել է կաղամբի (2.3 անգամ), գազարի (1.8 անգամ), սեղանի ճակնդեղի (1.8 անգամ), կարտոֆիլի (1.8 անգամ), վարունգի (40.9%), սխտորի (30.4%), գլուխ սոխի (22.7%), լոլիկի (16.7%), կանաչ պղպեղի (3.6%) գնաճ:


Բանջարեղենի գների ամսական փոփոխությունների դինամիկան 2004-2006թթ. հունվար-օգոստոսին

(նախորդ ամսվա նկատմամբ, %)




2006թ. օգոստոսին հուլիսի համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի 8.6% գնանկումը հիմնականում պայմանավորվել է սմբուկի 68.7%, լոլիկի 61.3%, կանաչ պղպեղի 53.5%, գազարի 32.6%, սեղանի ճակնդեղի 31.0%, կանաչ լոբու 25.5%, կաղամբի 9.3%, վարունգի 9.1% գնանկումով: Նշված ժամանակահատվածում գրանցվել է գլուխ սոխի, սխտորի, համապատասխանաբար՝ 7.1% և 6.8% գնանկում, իսկ կարտոֆիլի գինն աճել է 4.6%:


Կարտոֆիլի մանրածախ գների մակարդակը ՀՀ-ում 2003-2006թթ., ըստ տասնօրյա դիտարկումների
 դրամ (դրամ կգ-ի համար)



Կաղամբի մանրածախ գների մակարդակը ՀՀ-ում 2003-2006թթ., ըստ տասնօրյա դիտարկումների
 դրամ (դրամ կգ-ի համար)




Վարունգի մանրածախ գների մակարդակը ՀՀ-ում 2003-2006թթ., ըստ տասնօրյա դիտարկումների
 դրամ (դրամ կգ-ի համար)



Մրգի ապրանքախմբում 2006թ. օգոստոսին 2005թ. օգոստոսի համեմատ գրանցված 25.2% գնաճը նեծապես պայմանավորվել է ելակի 42.1%, խնձորի 50.3%, տանձի 52.0%, դեղձի 61.8%, ծիրանի 2.4 անգամ, սեխի 74.5%, ադամաթզի 28.4%, նարնջի 30.8% գնաճով:

Մրգի գների փոփոխությունները 2004-2006թթ. հունվար-օգոստոսին


(նախորդ ամսվա նկատմամբ, %)



2006թ. օգոստոսին հուլիսի համեմատ մրգի ապրանքախմբում գները հանրապետությունում նվազել են 13.1%, ինչը հիմնականում խաղողի 37.2%, դեղձի 34.2%, տանձի 18.5%, ինչպես նաև բոստանային մշակաբույսերից սեխի և ձմերուկի՝ համապատասխանաբար 60.5% և 46.8% գնանկման արդյունք է: Խնձորի, սալորի, կիտրոնի գները նշված ժամանակահատվածում նվազել են 12.6-9.1%, իսկ ադամաթզի և նարնջի գներն աճել են համապատասխանաբար 1.5% և 8.3%:

Խնձորի մանրածախ գների մակարդակը ՀՀ-ում 2003-2006թթ., ըստ տասնօրյա դիտարկումների դրամ

(դրամ կգ-ի համար)



Ոչ պարենային ապրանքների գներ: Ոչ պարենային ապրանքների շուկայում 2006թ. օգոստոսին 2005թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 2.7%, իսկ 2006թ. հուլիսի համեմատ՝ 0.4% գնաճ:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները

(%)

	2006թ.				հունվար-օգոստոսը 2005թ. հունվար-օգոստոսի նկատմամբ
	օգոստոսը				
	2006թ. հուլիսի նկատմամբ	2005թ. դեկտեմբերի նկատմամբ	2005թ. օգոստոսի նկատմամբ	2005թ. նկատմամբ	
Ոչ պարենային ապրանքներ այդ թվում՝	100.4	102.7	105.3	104.6	103.5
հագուստ և կտորեղեն	100.0	101.2	103.4	102.0	101.9


1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	2006թ.				հունվար-օգոստոսը 2005թ. հունվար-օգոստոսի նկատմամբ
	օգոստոսը				
	2006թ. հուլիսի նկատմամբ	2005թ. դեկտեմբերի նկատմամբ	2005թ. օգոստոսի նկատմամբ	2005թ. նկատմամբ	
վառելիք	99.8	97.2	102.3	98.6	100.0
կահույք	99.9	101.4	103.0	102.7	101.5
գորգեղեն	100.0	100.5	101.6	101.0	101.3
տեքստիլեղեն	99.9	101.8	101.1	101.2	100.6
կենցաղային էլեկտրաապրանքներ	99.8	100.0	100.9	99.3	101.0
խոհանոցային սպասք	100.1	101.3	102.1	101.8	101.6
լվացամիջոցներ	99.9	105.8	110.5	107.8	108.8
շինանյութեր	100.2	105.7	107.7	108.6	105.6
այգեգործական ապրանքներ	104.1	123.0	122.9	123.5	109.5
դեղամիջոցներ	99.9	98.6	99.0	97.4	98.0
անձնական օգտագործման մեքենաներ և բեռնափոխակ	102.2	108.8	116.2	115.8	114.7
նշակույթի ապրանքներ	99.5	94.3	95.3	96.9	99.3
գրենական պիտույքներ	100.3	99.0	102.4	102.0	104.8
զեղահարդարման ապրանքներ	99.9	100.5	101.2	100.5	100.3
ոսկերչական ապրանքներ	99.1	131.9	139.7	137.7	131.9
անձնապիտո ապրանքներ	99.7	99.6	100.3	98.0	99.3

2006թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում արձանագրվել է բեռնափոխակի և դիզելային վառելիքի համապատասխանաբար 2.0% և 5.8% գնաճ, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ բեռնափոխակի և դիզելային վառելիքի գնաճը կազմել է, համապատասխանաբար՝ 18.1% և 7.2%:

Բեռնափոխակի և դիզելային վառելիքի գների փոփոխությունները 2003-2006թթ.

(2002թ. նկատմամբ, %)



Ծառայությունների սակագներ: 2006թ. օգոստոսին 2005թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների 3.8% հավելաճ, իսկ 2006թ. հուլիսի համեմատ՝ 0.2% նվազում:

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

(%)

	2006թ.				հունվար-օգոստոսը 2005թ. հունվար-օգոստոսի նկատմամբ
	օգոստոսը				
	2006թ. հուլիսի նկատմամբ	2005թ. դեկտեմբերի նկատմամբ	2005թ. օգոստոսի նկատմամբ	2005թ. նկատմամբ	
1 առայություններ, ընդամենը	99.8	103.8	104.5	104.4	103.5

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	2006թ.				
	օգոստոսը				հունվար-օգոստոսը 2005թ. հունվար-օգոստոսի նկատմամբ
	2006թ. հուլիսի նկատմամբ	2005թ. դեկտեմբերի նկատմամբ	2005թ. օգոստոսի նկատմամբ	2005թ. նկատմամբ	
<i>այդ թվում՝</i>					
կենցաղային բնույթի	100.2	101.5	102.2	102.2	101.9
բնակարանային-կոմունալ	100.0	103.7	103.5	104.3	102.3
բուժսպասարկման	100.2	106.9	107.8	107.1	103.1
տրանսպորտի	98.3	100.6	100.4	101.2	103.3
կապի	99.8	110.6	113.6	99.6	112.9
նշակույթի	99.5	95.0	105.2	103.7	107.9
կրթության համակարգի	100.0	100.1	109.3	105.2	108.8
հանգստի կազմակերպման	100.0	100.3	94.8	99.4	100.0
հանրային սննդի	100.1	101.9	103.1	102.9	103.7
իրավական և բանկային	100.0	100.2	100.6	100.7	101.0

Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2006թ. օգոստոսին հուլիսի համեմատ սպառողական գները նվազել են 1.8-0.7%, ընդ որում, գնանկման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Եղեգնաձորում: Մայրաքաղաքում սպառողական գները նվազել են 0.7%:

Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2006թ. օգոստոսին հուլիսի համեմատ արձանագրվել է պարենային ապրանքների 4.0-1.4% գնանկում, ընդ որում, գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Եղեգնաձորում: Մայրաքաղաքում պարենային ապրանքների գները նվազել են 1.4%:

Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2006թ. օգոստոսի 30-ի դրությամբ

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չու, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
ԳԳ, միջինը	1540	1330	1613	595	528	325	207	217	146	357
<i>այդ թվում՝</i>										
Երևան	1550	1346	1648	599	539	331	226	222	146	383
Գյումրի	1467	1350	1592	649	500	320	164	251	134	475
Վանաձոր	1550	1233	1437	548	533	308	180	193	160	300
Վաղարշապատ	1600	1300	1470	544	480	300	176	174	100	250
Թալին	1550	1450	1650	600	500	330	180	180	180	250
Դիլիջան	1500	1250	1800	575	525	328	200	200	150	300
Հրազդան, Չարենցավան	1600	1370	1600	560	510	300	200	200	130	270
Եղեգնաձոր	1400	1350	1400	600	500	316	180	250	200	250
Մարտունի	1400	1300	1550	650	500	330	150	225	150	250
Կապան	1400	1360	1660	640	510	342	220	260	220	310
Արտաշատ	1600	1200	1550	572	550	325	169	200	140	425

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2006թ. օգոստոսի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 6858 դրամ (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է մայրաքաղաքում 6990 դրամ, իսկ ամենացածրը՝ ք. Վաղարշապատում 6394 դրամ), ինչը 7.3%-ով գերազանցել է նույնաճանաչ ապրանքատեսակների 2005թ. օգոստոսի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքը (6389 դրամ):

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2006թ. օգոստոսին հուլիսի համեմատ գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.1-1.0% գնաճ, ընդ որում, գնաճի

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Եղեգնաձորում: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գնաճը կազմել է 0.4%:

Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում 2006թ. օգոստոսին հուլիսի համեմատ գրանցվել է ծառայությունների սակագների 0.3-0.1% նվազում, իսկ մյուս 2 քաղաքներում՝ 0.5-1.2% հավելում: Մայրաքաղաքում ծառայությունների սակագները նվազել են 0.3%:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2006թ. օգոստոսին 2005թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված քաղաքների և ապրանքախմբերի

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում՝				ծառայությունների
		սպառողական ապրանքների	դրանցից՝			
			պարենային ապրանքների	ոգելից խմիչքի և ծխախոտի	ոչ պարենային ապրանքների	
ՀՀ, ընդամենը	102.7	102.2	102.2	100.2	102.7	103.8
<i>այդ թվում՝</i>						
Երևան	102.6	102.1	102.1	100.2	102.9	103.8
Գյումրի	101.4	101.2	101.6	100.1	100.3	101.8
Վանաձոր	103.8	102.1	101.7	100.4	104.0	107.7
Վաղարշապատ	103.2	102.2	102.2	100.7	103.1	105.5
Թալին	102.0	101.5	101.4	99.8	102.6	102.9
Դիլիջան	101.9	102.1	102.8	100.5	100.5	101.6
Հրազդան, Չարենցավան	102.9	103.0	103.3	100.4	103.0	102.8
Եղեգնաձոր	101.0	100.7	100.2	100.2	102.4	101.7
Մարտունի	101.8	102.1	102.5	100.1	101.4	101.1
Կապան	104.8	104.4	104.9	99.9	104.5	105.9
Արտաշատ	103.1	102.4	102.9	100.5	101.8	104.7

Արդյունաբերողների արտադրանքի գներ: 2006թ. օգոստոսին 2005թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի 1.5% գնաճ, 2005թ. նույն ժամանակահատվածի 5.9% գնանկման դիմաց:

Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի

	2006 թվականի			
	օգոստոսը			հունվար-օգոստոսը 2005թ. հունվար-օգոստոսի նկատմամբ
	2006թ. հուլիսի նկատմամբ	2005թ. օգոստոսի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Ամբողջ արդյունաբերությունը	99.7	103.5	153.8	100.3
<i>այդ թվում՝</i>				
Էլեկտրաէներգետիկա	99.9	98.4	95.3	99.3
գունավոր մետալուրգիա	98.5	100.1	320.6	93.7
քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն	99.4	96.9	123.1	101.4
մեքենաշինություն	103.0	105.2	116.5	111.7
այլ արդյունաբերական արտադրություն (ոսկերչական արդյունաբերություն)	98.1	110.5	125.3	115.2
անտառային, փայտամշակման, թղթ-ցելյուլոզի արդյունաբերություն	100.0	110.7	113.3	111.5
շինանյութերի արդյունաբերություն	100.9	126.5	142.6	127.5
թեթև արդյունաբերություն	96.0	128.0	127.7	116.3
սննդի (ներառյալ ալյուրի ու համակցված կերերի) արդյունաբերություն	100.8	106.6	131.8	102.9
պոլիգրաֆիական արդյունաբերություն	102.2	111.1	90.8	98.2

Բեռնափոխադրումների սակագներ: 2006թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում արձանագրվել է բեռնափոխադրումների սակագների 0.1% հավելում, ինչը


հիմնականում պայմանավորվել է ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների 2.0% հավելաճով: Օդային տրանսպորտում արձանագրվել է սակագների 3.7% նվազում, իսկ խողովակաշարային և երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների մակարդակը մնացել է անփոփոխ:

2006թ. օգոստոսին 2005թ. օգոստոսի համեմատ բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 117.2%, այդ թվում. երկաթուղային տրանսպորտով՝ 98.6%, ավտոմոբիլայինով՝ 103.6%, օդայինով՝ 91.8%, խողովակաշարային տրանսպորտով՝ 139.1%, իսկ հունվար-օգոստոսին 2005թ. հունվար-օգոստոսի համեմատ՝ համապատասխանաբար, 112.8%, 100.7, 103.9, 104.6 և 125.8%:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գներ: 2006թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված գյուղատնտեսական մթերքի գները նվազել են 16.8%, ինչը 4.8 տոկոսային կետով գերազանցել է 2005թ. նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (12.0% գնանկում):

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսները ՀՀ մարզերում, ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի, 2006թ. օգոստոսին

(նախորդ ամսվա նկատմամբ, %)



2006թ. օգոստոսին 2005թ. օգոստոսի համեմատ գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը կազմել է 115.0%, այդ թվում. բուսաբուծական մթերքինը՝ 129.9%, անասնապահական մթերքինը՝ 104.1%, իսկ հունվար-օգոստոսին 2005թ. հունվար-օգոստոսի համեմատ, համապատասխանաբար՝ 115.0%, 136.3 և 104.6%:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման միջին գները ՀՀ-ում, 2002-2006թթ. օգոստոսին

(դրամ)

	Չափի միավորը	2002	2003	2004	2005	2006
Ցորեն	կգ	77	103	116	80	86
Գարի	- ,, -	62	71	99	72	120
Լոբի	- ,, -	450	...	350	350	...
Կարտոֆիլ	- ,, -	74	75	67	73	123
Կաղամբ	- ,, -	51	84	84	85	107
Վարունգ	- ,, -	84	38	94	75	104
Լոլիկ	- ,, -	38	33	40	42	41
Սմբուկ	- ,, -	46	45	65	35	67
Գազար	- ,, -	100	106	53	73	131
Գլուխ սոխ	- ,, -	77	94	106	102	187
Խնձոր	- ,, -	174	142	163	121	185
Տանձ	- ,, -	253	152	237	177	208

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Չափի միավորը	2002	2003	2004	2005	2006
Խաղող	- „,-	218	254	338	226	223
Մեղր	- „,-	2467	2487	2534	2581	2757
Միս տավարի	- „,-	899	967	1057	1139	1193
ոչխարի	- „,-	928	958	1051	1256	1308
խոզի	- „,-	947	1082	1439	1530	1434
Կաթ	լ	91	91	94	93	103
Մածուկ	- „,-	167	165	167	173	177
Պանիր (յուղոտ)	կգ	725	760	848	838	893
Չու	հատ	39	41	42	43	45
Միանյա խոտեր	կգ	19	21	20	17	41
Բազմանյա խոտեր	- „,-	23	27	26	27	43

... _ դիտարկված տնտեսություններում իրացում (վաճառք) չի կատարվել:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներն ըստ մարզերի

(%)

	Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը		Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը	
	2006թ. օգոստոսին		2006թ. օգոստոսին	
	2006թ. հուլիսի նկատմամբ	2005թ. օգոստոսի նկատմամբ	2006թ. հուլիսի նկատմամբ	2005թ. օգոստոսի նկատմամբ
ՀՀ, ընդամենը	83.2	115.0	104.3	113.1
Արագածոտն	99.7	112.4	102.1	110.1
Արարատ	76.6	119.9	102.2	104.8
Արմավիր	64.2	114.7	99.3	105.2
Գեղարքունիք	97.8	102.2	106.7	117.2
Լոռի	97.5	104.1	104.1	118.0
Կոտայք	98.6	110.4	114.2	140.7
Շիրակ	100.2	107.8	109.9	116.9
Սյունիք	97.1	112.8	105.3	107.1
Վայոց ձոր	98.4	102.8	102.8	103.1
Տավուշ	98.7	100.2	97.7	104.1